

ԽՈՍՏՈՎԱՆԱՆՔ

Գ-պ. Մեղանչեցի Ամենասուրբ Երրորդութեան՝ Հօրը, Որդիին եւ Սուրբ Հոգիին դէմ: Մեղաւոր եմ Աստուծոյ առջեւ: Բոլոր գործած մեղքերս կը խոստովանիմ Աստուծոյ առջեւ, Սուրբ Աստուածածինին եւ բոլոր սուրբերուն առջեւ, ինչպէս նաեւ քու առջեւդ, հա՛յր սուրբ: Մեղանչեցի՝ մտածումով, խօսքով ու գործով. երբեմն կամաւորաբար, երբեմն ակամայ, երբեմն գիտակցաբար եւ երբեմն անգիտակցաբար՝ մեղանչեցի Աստուծոյ դէմ:

Քինյ. Աստուած թողութիւն թող շնորհէ:

Գ-պ. Մեղանչեցի՝ թե՛ հոգիովս եւ անոր ձգտումներովը, թե՛ միտքովս եւ անոր գրգիռներովը եւ թե՛ մարմնովս, զգայարանքներով: Մեղանչեցի՝ հոգեկան ձգտումներովս, խորամանկութեամբ, անզգամութեամբ, յանդգնութեամբ եւ երկչոտութեամբ, շռայլութեամբ եւ ժխտութեամբ, զեղխութեամբ եւ անիրաւութեամբ, չարիքին հաւանութիւն տալով, եւ ինքզինքս յուսահատութեան ու կասկածամտութեան մատնելով՝ մեղանչեցի Աստուծոյ դէմ:

Քինյ. Աստուած թողութիւն թող շնորհէ:

Գ-պ. Մեղանչեցի՝ մտքիս չար խորհուրդներովը, նենգութեամբ, ատելութեամբ, ծուռ նայուածքով, նախանձով ու չար աչքով: Գիշեր ու ցերեկ վաւաշոտ եւ պռոնկական խորհուրդներ ունեցայ՝ ըլլա՛յ արուական, ըլլա՛յ իգական, ըլլա՛յ անասնական, ըլլա՛յ գազանական: Երեւակայութեամբ գիջութիւն ըրի եւ երագի մէջ իսկ գարշելի աղտոտութիւն ընելով՝ մեղանչեցի Աստուծոյ դէմ:

Քինյ. Աստուած թողութիւն թող շնորհէ:

Գ-պ. Մեղանչեցի մարմնական ցանկութիւններովս, հեշտասիրութեամբ, թուլամորթութեամբ, քնկոտ յօրանջումներով, մարմնական գրգիռներով, եւ զանազան պժգալի ախտերով: Ականջներս հեշտագին խօսքերու տուի, աչքերս՝ անամօթ նայուածքներու, սիրտս՝ անառակ ցանկութիւններու, ռունգերս՝ մեղկ բուրմունքներու, եւ բերանս՝ ցանկալից համբոյրներու: Անժուժկայութեամբ, շուայտութեամբ, եւ արբեցութեամբ՝ մեղանչեցի Աստուծոյ դէմ:

Քինյ. Աստուած թողութիւն թող շնորհէ:

Գ-պ. Մեղանչեցի՝ լեզուովս. չարախօսութեամբ, ստախօսութեամբ, սուտ երդումով, երդմնազանցութեամբ, հակառակախօսութեամբ, շողոքորթութեամբ, քսութեամբ, դատարկաբանութեամբ եւ ծաղրով, զրպարտութեամբ, պառակտիչ խօսքերով ու անէծքով: Տրտնջալով, դժգոհելով, բամբասելով, եւ հայհոյելով՝ մեղանչեցի Աստուծոյ դէմ:

Քինյ. Աստուած թողութիւն թող շնորհէ:

Գ-պ. Մեղանչեցի՝ շինուածքիս բոլոր մասերովը եւ մարմնիս բոլոր անդամներովը, հինգ զգայարանքներովս եւ հոգիիս վեցեակ շարժումներովը, վերամբարձ գոռոզութեամբ տկարները ոտնահարելով, գետնաբարշ կեղծաւորութեամբ զօրաւորները շողոքորթելով, աջ ու ձախ խոստորելով, ինձմէ առաջ գտնուողներուն դէմ մեղանչելով, եւ ինձմէ ետք եկողներուն չար օրինակ դառնալով՝ մեղանչեցի Աստուծոյ դէմ:

Քինյ. Աստուած թողութիւն թող շնորհէ:

Գ-պ. Տակաւին, մեղանչեցի այն եօթը յանցանքներով որոնք մահացու մեղքերն են. հպարտութեամբ, նախանձով, բարկութեամբ, ծուլութեամբ, ազահութեամբ, որկրամոլութեամբ, պղծասիրութեամբ, եւ ասոնց բոլոր տեսակներովը՝ մեղանչեցի Աստուծոյ դէմ:

Քինյ. Աստուած թողութիւն թող շնորհէ:

Գ-պ. Եւ դեռ՝ մեղանչեցի Աստուծոյ բոլոր պատուիրաններուն դէմ, թե՛ յանձնառութիւններուս եւ թե՛ հրաժարելիքներուս մէջ, որովհետեւ ո՛չ յանձն առածներս կատարեցի, եւ ո՛չ ալ հրաժարած բաներէս հեռացայ: Օրէնքը սորվեցայ, սակայն Օրէնքի գործադրութեան մէջ ծուլացայ: Քրիստոնէութեան շարքերուն մէջ անցայ, բայց գործերով անարժան գտնուեցայ: Չարիքը գիտնալով հանդերձ՝ կամաւորաբար շեղեցայ, եւ ես իմ կամքովս բարի գործերէն հեռացայ: Վա՛յ ինձի, վա՛յ ինձի, վա՛յ

ինձի. ո՞ր մէկը ըսեմ, ո՞ր մէկը խոստովանիմ, այնքա՛ն շատ են յանցանքներս, չըսուելի՞ք են անօրէնութիւններս, աններելի են ցաւերս եւ անբժշկելի են վերքերս. մեղանշեցի Աստուծոյ դէմ:
Քինյ. Աստուած թողութիւն թող շնորհէ:

Դ-պ. Հա՛յր սուրբ, ինձի համար հաշտութեան միջնորդ եւ բարեխօս եղիր Աստուծոյ Միածին Որդիին քով, եւ քեզի տրուած իշխանութեամբ՝ զիս իմ մեղքերուս կապանքներէն արձակէ՛, կ'աղաչե՛մ:

Քինյ. Թող ամենագոր Տէրը ողորմի քեզի եւ թողութի՛ւն շնորհէ քու բոլոր յանցանքներուդ, թէ՛ խոստովանածներուդ եւ թէ՛ մոռցածներուդ: Իսկ ես՝ քահանայական կարգիս իշխանութեամբ եւ աստուածային հրամանին համաձայն՝ թէ «ինչ որ երկրի վրայ արձակէք՝ երկինքի մէջ ալ արձակուած պիտի ըլլայ», Հօրը, Որդիին եւ Սուրբ Հոգիին անունով կ'արձակեմ քեզ՝ մտածումով, խօսքով ու գործքով կատարած բոլոր մեղքերէդ, եւ վերստին քեզ կը յանձնեմ սուրբ Եկեղեցւոյ Խորհուրդներուն, որպէսզի ի՛նչ բարիք որ գործես՝ Աստուծոյ քով բարեգործութիւն նկատուի քեզի համար եւ հասնիս յաիտենական կեանքի փառքին. ամէն: